

Գ. Գ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՏՆԱՅԻՆ ՃՆՃՂՈՒԿՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Տնային ճնճղուկները Հայկական ՍՍՌ-ում և առանձնապես Արարատյան հարթավայրում հանդիսանում են ֆոնային ու խիստ սինանտրոպ թռչուններ, այդ իսկ տեսակետից նրանք իրենցից թե՛ տեսական և թե՛ դործնական մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Արարատյան հարթավայրի տնային ճնճղուկների վրայից հավաքված ևս մեծ քանակությամբ տարբեր տեսակի տղեր, փետրակերներ: Զիլֆյանի, Ավետիսյանի և Հովասափյանի [1] տվյալների համաձայն՝ տնային ճնճղուկներից գտնված են լվեր, իսկ Օհանջանյանի [7] տվյալներով՝ տնային ճնճղուկները Երևանի շրջակայքում կարող են տարածել մի շարք վտանգավոր հիվանդություններ (չումա, տուլարեմիա և այլն): Հայտնի է, որ Արարատյան հարթավայրում բնակավայրերը միմյանց շատ են մոտ, ուստի տնային ճնճղուկները կարող են տարածել մեկ թռչնաբուժական կամ անասնապահական տրնտեսությունից մյուսը տարբեր հիվանդություններ:

Նրանք մեխանիկորեն ևս կարող են տարածել զանազան հիվանդություններ, նույն թվում և մարդու: Արարատյան հարթավայրի գյուղերում առայժմ բարվաք վիճակում չէ կոյուղու հարցը, իսկ ճնճղուկները լինելով սինանտրոպ, անարգել կերպով քուջուջ են անում սղաճանոցներում, բակերում, այնուհետև կեր են որոնում նույնիսկ տան պատշգամբում, խոհանոցում (եթե դուռը բաց է), ջուր խմում լվացարանից: Այս երևույթները բազմիցս դիտվել են ինչպես մեր, այնպես էլ տարբեր հեղինակների կողմից [8, 3 և ուրիշ]:

Տնային ճնճղուկների տնտեսական նշանակությունը պարզելու նպատակով դիտել ենք ինչպես առանձին անհատների, այնպես էլ երամանների սնվելը դաշտերում, այգիներում ու բանջարանոցներում: Տարվա տարբեր եղանակներին հավաքվել են քուջերի ու ստամոքսների պարունակություններ: Նրանց ձագերի պարանոցները կապելու միջոցով հավաքվել է մեծ քանակությամբ կեր: Պարզվել է, որ տնային ճնճղուկների ձագերը ձվից դուրս գալու առաջին 3 օրը կերակրվում են առավելապես միջատներով, ըստ որում նրանց կազմի մեջ գտնվում են ինչպես օդտակար, այնպես էլ վնասակար միջատներ (հիմնականում թրթուրներ): Պարզվել է, որ 3-րդ օրվանից սկսած սննդի կազմում ավելանում է բուսական կերը, այնուհետև 6-րդ օրվանից ձագերը անցնում են դրեթե լրիվ բուսական կերի: Իսկ բացառիկ դեպքերում ծնողները կերակրվում են միջատներով:

Կովկասյան տնային ճնճղուկների կերակրմանը վերաբերող հարցերը 1948—62 թթ. հիմնականում ուսումնասիրվել են Արարատյան հարթավայրի պայմաններում:

Դիտողություններից պարզվել է, որ ինչպես ձմռանը, այնպես էլ վաղ գարնանը Արարատյան հարթավայրում, իսկ լեռնային շրջաններում էլ ավելի ուշ,

ճնճղուկները հիմնականում սնվում են բնակավայրերում ու նրանց հարող տարածություններում [4]:

Ոմանք այն կարծիքին են, որ նրանք «սանիտարների» դեր են կատարում՝ հավաքելով կերի մնացորդներ: Դա, իհարկե, խաբուսիկ է և առաջին հայացքից է այդպես թվում: Ինչ «սանիտարի» մասին կարող է խոսք լինել, որք այդ թռչունները քուջուջ անելով որոշ գյուղերում, ուղղակի մարդու կամ կենդանու կղանքի մեջ, իսկ քաղաքներում՝ աղբանոցներում ու բակերում, թրոշում-կանգնում են պատշգամբներում գտնվող սեղաններին, երբեմն այնտեղից սննդամթերք փախցնում, այնուհետև ջուր են խմում ջրի ծորակից, եթե այդպիսին կա շրջակայքում: Այսպես, որ այդ նույն տեղերի հետ անմիջական շփում ունի մարդը: Ամենուրեք տնային ճնճղուկը մարդու «ուղեկիցն» է և այն էլ ոչ բարի ուղեկիցը:

Անմիջական դիտողությունները ցույց են տալիս, որ գարնանը տնային ճնճղուկները ոչ մեծ խմբերով կտցահարում են ծառերի բողբոջները: Ծնճղուկներից առանձնապես շատ են տուժում տանձենիները. այդ երևույթը առաջին անգամ մեր կողմից դիտվել է Կիրովականում 1954 թվականին, որտեղ մեկ ծառի եզրային ճյուղերի 1 մ² վրա հաշված բողբոջների քանակից կտցահարված էր 45 տոկոսը: Տեղացիների պատմելով՝ դա բացառիկ երևույթ չէ. այդ բանում մենք համոզվեցինք հետագա տարիներին՝ 1957, 1958, 1960 թթ. մեր կատարած դիտողություններից: Պարզվել է, որ մոտ 25—40% ընկնում է տանձենու բերքատվությունը, նայած թե տվյալ վայրում ճնճղուկների համադրնադրման որքա՛ն հարմար տեղեր են եղել:

Պարզվել է, որ Երևանի շրջակայքում, Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Արտաշատի, Վեդու շրջաններում տնային ճնճղուկները վնասում են բալենու, կեռասենու, սալորենու, խնձորենու, ծիրանենու, թթենու և մասամբ էլ դեղձենու բողբոջներին ու ծաղիկներին:

Տնային ճնճղուկները ավելի շատ վնասում են ծառերի եզրային ճյուղերի բողբոջներին, իսկ միջին մասում գտնվող ճյուղերը գրեթե անվնաս են մնում:

Գարնանը բալենու բողբոջները տնային ճնճղուկների կողմից վնասվում են 8—10%-ով, կեռասենու բողբոջները՝ 10—12%-ով, ծիրանենու բողբոջները՝ 15—16%-ով, թթենու բողբոջները՝ 20—25%-ով և դեղձենու բողբոջները՝ 1—5%-ով:

Արարատյան հարթավայրում գարնանը տնային ճնճղուկները մեծ վնաս են հասցնում նաև խաղողի այգիներին, կտցահարելով վաղի բողբոջները:

Խաղողի այգիներին հասցվող վնասը ավելի ցայտուն է արտահայտվում Արտաշատի և Վեդու շրջանների կոլտնտեսություններում ու սովխոզներում՝ այն հասնում է 15—25%-ի: Մեզ թվում է, որ վերոհիշյալ վայրերում տնային ճնճղուկների կողմից խաղողի այգիներին հասցվող վնասի այդպիսի աստիճանի պայմանավորվում է նաև նրանով, որ այգիները գյուղերից մոտ են գտնվում, այգիներում կան առանձին բրիգադաների կամ մանկամսուր-մանկապարտեզների համար կառուցված տներ: Հաճախ են հանդիպում հին կիսավեր տնակ-

* Ծառերի վնասվածության աստիճանը որոշվել է հետևյալ ձևով. մեկ հեկտար այգու տարբեր մասերից ընտրվել է 5-ական ծառ: Յուրաքանչյուր ծառ բաժանվել է երեք մասի. այնուհետև յուրաքանչյուր 1/3 մասում 1 մ²-ում բնորոշված ճյուղերի վրա հաշվվել է վնասված (կերված) բողբոջների քանակը:

ներ, որոնց պատերի վրա, կտուրների տակ կան բազմաթիվ ճեղքեր: Այդպիսի շինությունները և փլատակները բարենպաստ պայմաններ են ստեղծում տնային ճնճղուկների բազմացման համար:

Կիրովի անվան սովխոզի խաղողի այգիներում գտնվող մի այդպիսի տան պատերի և կտուրի ճեղքերում հայտնաբերված է 125 բույն: Տնային ճնճղուկների տնտեսական նշանակությունը պարզելու նպատակով 1948—62 թթ. Արարատյան հարթավայրի տարբեր շրջաններից որսացել են 4500 տնային ճնճղուկներ: Վերցվել են նրանց բույների ու ստամոքսների պարունակությունները և խմբավորվել ըստ սեզոնների:

Աղյուսակ 1

Տնային ճնճղուկների կերած բույսերը զարնան սեզոնում (մարտ-մայիս) (ըստ 650 բույների և ստամոքսների)

Բույսերի անվանումը	Հանդիպման հաճախականությունը ըստ տեղանքի					
	մշակավայր	պտղատու այգի, բանջարան	վերտակ	գաջ	ընդամենը	խմբային անվանումը
Տարբեր ծառերի բողբոջներ	130	146	24	13	313	23,26
Ցորեն—Triticum	235	28	12	67	3 2	25,41
Հացազգի—Gramineae	82	64	25	94	265	19,69
Առվույտի սերմ—Medicago sativa . .	36	62	24	68	190	14,11
Հավակորեկ—Echinochloa	25	17	—	58	100	7,45
Խոզանուկ—Setaria	13	24	5	9	51	3,79
Խոմեբրիա—Roemeria	5	11	—	15	31	2,3
Թելուկ կամ սագախոտ—Chenopodium	7	12	—	11	30	2,22
Մատիտեղ—Polygonum	—	7	5	12	24	1,79

Աղյուսակ 1-ում նշված 650 ստամոքսներից 28-ի մեջ եղել են միջատների մնացորդներ: Ըստ մնացորդների հնարավոր է եղել որոշել միայն կարգը Orthoptera, Coleoptera Hymenoptera և երկու ճնճղուկի բերանից՝ Phytomus variabilis: Հավանական է, որ վերջինները տանում էին ձագերի համար:

Բացի ստամոքսներից ու բույներից վերցված կերից, Արարատյան հարթավայրի տարբեր բնակավայրերից ու այգիներից, բնադրման շրջանում, ձագերի պարանոցները կապելու միջոցով 1948—62 թթ. ընթացքում հավաքել ենք կովկասյան տնային ճնճղուկի 1150 ձագերից 23.000 կերային միավոր:

Ձագերի կերը վերցրվել է օրական երկու անգամ: Ձագերի բնային կյանքի վերջին 2—3 օրը կեր չի վերցվել:

Աղյուսակ 2-ում նշված 350 բներից 215-ը եղել են տների պատերի ճեղքերում, 24 բույն զառիթափ տեղերում՝ զետնի մեջ, 111 բույն՝ խաղողի այգիներում եղած ծառերի վրա, որից 89 բույն բարդիների, 10 բույն տանձենիների և 12 բույն ծիրանենիների վրա:

Բնակավայրերից 3,5 կմ-ից ավելի հեռու վայրերում տնային ճնճղուկի բներ չեն հանդիպել:

Դիտողությունները ցույց են տվել, որ տնային ճնճղուկներն սկսում են մասսայաբար ցորենի դաշտերը հաճախել մայիսից, այսինքն՝ երբ Արարատյան հարթավայրում ցորենը կաթնամոմային վիճակում է գտնվում: Ցորենով սնվում են հասակավոր ճնճղուկները և միաժամանակ կերակրում ձագերին:

Վոլկասյան տնային ճնճղուկների ձագերի պարանոցները կապելու միջոցով հավաքած կերի օրակական աղյուսակ (10 օր, օրական 2 տնգամ 1150 ձագերից)

Կենդանական կեր	Բերված քանակը	Ընդամենը	Բուսական կեր	Բերված քանակը	Ընդամենը	Կերի համընդանուր հաճախականությունը տոկոսներով	
						Կենդանական	բուսական
Սարդեր (հասուն) — Araneida	41		Ցորեն — Triticum	5732			
Ցատկող ուղղաթևեր (հասուն) — Saltatoria (Orthoptera)	218		Հացազգի ալի սերմեր — Gramineae	3177			
Շղրիղներ (հասուն) — Gryllodea	196		Թուփ — Morus	3866			
Կիսակարծրաթևեր (հասուն) — Heteroptera	68		Սիգախոտ — Phleum	1542			
Կարծրաթևեր (հասուն և թրթուր) — Coleoptera	835		Չորոշված բույսերի մասեր	1462			
Տերևակերներ (հասուն) — Chrysomelidae	47	3522	Հավակորեկ — Echinochloa	1387	19478	15,31	84,69
Առվույտի տերևային երկարակնճիթ (թրթուր) — Phytomus variabilis	85		Ծիրանենու պտղի մասեր — Armeniaca vulgaris M.	895			
Meloidae (հասուն)	461		Բալ և կեռաս — Cerasus vulgaris և avium L.	1183			
Թաղանթաթևեր (հասուն) — Hymenoptera	412		Եգիպտացորեն — Zea mays	234			
Երկթևավորներ (թրթուր) — Diptera	198						
Թեփուկաթևեր (թրթուր) — Lepidoptera	961						

Իրամենքում գտնվող ճնճղուկների թիվը օրեցօր ավելանում է: Յուրաքանչյուր երամում կարելի է հաշվել հազարավոր անհատներ:

Մեկ զույգ ճնճղուկը յուրաքանչյուր անգամ կարող է ուտել և ձագերի համար տանել 1—2 գ ցորեն, իսկ մեկ օրվա ընթացքում մեկ զույգ ճնճղուկը ձագերի համար կեր է բերում մոտ 200 անգամ: Ձագերի կերի մոտ 39,75%-ը կազմում է հատիկը, իսկ ընդհանուր սննդի մեջ բուսական կերը ամբողջությամբ վերցրած կազմում է 84,69%:

Ինչպես երևում է աղյուսակ 3-ից, ամռան ամիսներին տնային ճնճղուկների կերային կազմում հիմնական տեղը գրավում է ցորենը՝ 36,96%, ապա կերախոտերի և ալի հացազգի սերմերը՝ 28—30%, ծառապտուղները՝ 18—19%: Երբ խաղողն սկսում է հասունանալ, ճնճղուկները մասսայաբար փչացնում են, կտցահարելով այն: Կտցահարելուց հետո մեղուները լրիվ ծծում-չորացնում են խաղողի հատիկը, այնպես որ վնասված տեղերում մնում է միայն խաղողի չորացած հատիկի մաշկը, կամ երբեմն խաղողի վերավորված հուրանը՝ «ողկույզը», ամբողջովին փստում է և հնարավոր չի լինում հավաքել:

Ամռանը տնային ճնճղուկների կերային կազմում մուլախոտերի սերմերը, կամ ոչ կարևոր տնտեսական նշանակություն ունեցող բույսերի սերմերը չեն տոկոս են կազմում (աղ. 3):

Աղյուսակ 3

Տնային ճնճղուկների կերած բույսերը Արարատյան հարթավայրում ամռանը (հունիս-օգոստոս) (ըստ 1234 բույսերի և ստամոքսների)

Բույսերի մասերի անունը	Հանդիպման հաճախականությունը ըստ տեղանքի						
	ընկավայր	պտղատու այգի, բան- ջարանոց	դոսալի	դաշտ	ընդամենը	ընդհանուր քանակի նկատմամբ տոկոսներով	ծանոթու- թյուն
Ծորեն—Triticum	273	98	62	720	1153	36,97	
Թուխ—Morus	82	115	46	12	255	8,18	
Երեքնուկ—Trifolium	22	83	35	62	202	6,48	
Կեռաս և բալ—Cerasus vulgaris և avium L.	120	75	—	—	195	6,26	
Առվույտի սերմ—Medicago sa- tiva L.	65	28	7	89	189	6,06	
Հացաղդի այլ սերմեր—Grami- neae	42	21	4	52	122	3,91	
Խոզանուկ—Setaria	12	65	8	34	169	5,42	
Հավակորեկ—Echinochloa	48	56	—	64	168	5,38	խիված է խաղող ուտելիս, կամ խա- ղողի այ- գում
Ծիրանենու պտղի մնացորդ- ներ—Armeniacavulgaris L. . .	68	74	—	—	142	4,55	
Մառիտեղ—Polygonum	15	16	—	110	141	4,52	
Խաղող—Vitisvinifera L.	—	108	—	—	108	3,47	
Եղեսպակ—Salvia	45	22	—	8	75	2,40	
Հավակատար—Amaranthus . . .	4	6	1	48	59	1,87	
Որդախոտ (սերմ)—Phleum . . .	4	15	—	22	41	1,32	
Սաղախոտ (սերմ)—Chenopo- dium	2	5	—	24	31	1,00	
Սորգո—Sorghum	3	18	—	5	26	0,83	
Կատվաղաղձ (սերմ)—Nepeta . .	12	—	—	6	18	0,58	
Եղան լեղու (սերմ)—Plantago . .	—	5	2	7	14	0,45	
Ռոմերիա (սերմ)—Roemeria . . .	5	2	4	—	11	0,35	

Ամռանը 1234 բույսերից և ստամոքսներից 87-ի մեջ եղել են քիչ քանա-
կությամբ միջատների մնացորդներ, որոնք պատկանում են Orthoptera, Cole-
optera և Hymenoptera կարգերին: Իսկ նրանցից 12 ստամոքսի մեջ հայտնա-
բերված են զատիկներ:

Միանգամայն ակնհայտ է, որ, թեպետ ամռան ամիսներին տնային ճնճ-
ղուկները որոշ չափով օգուտ են տալիս, սակայն այդ օգուտը համեմատած
նրանց հասցրած վնասի հետ, նույնիսկ արժանի չէ հիշատակության:

1948—1962 թթ. ամռան ամիսներին, էջմիածնի, Հոկտեմբերյանի և Ար-
տաշատի շրջաններում կատարված է տնային ճնճղուկների կողմից ցորենի
դաշտերին հասցված վնասի հաշվառում: Մեկ հեկտար տարածության վրա
ընտրված է եղել 5 տարբեր տեղամասեր, յուրաքանչյուրը 1 մ² տարածու-
թյամբ, բոլոր 5 տեղամասերում որոշվել է հասցված վնասի տոկոսը և հան-
վել միջին թվաքանականը: Պարզվել է, որ վերոհիշյալ շրջանների մեկ հեկ-
տար ցանքատարածությունում տնային ճնճղուկների հասցրած վնասը կազմում
է 20—35%:

Համեմատաբար շատ են վնասվում բնակավայրերին մոտ գտնվող ցանքատարածությունները և, հատկապես, նրանց եզրային մասերը: Դեպի դաշտի խորքը հասցված վնասի տոկոսը աստիճանաբար նվազում է: Առանձնապես շատ են տուժում ցորենի փոքր ցանքատարածությունները, իսկ սահմանափակ փորձադաշտերում, որոնք փոքր տարածություն են գրավում, գրեթե հնարավոր չէ արդյունք ստանալ:

Աշնանը Արարատյան հարթավայրում տնային ճնճղուկները սնվում են բույսերի սերմերով ու ցորենի հատիկներով: Մինչև 1950 թ. կատարված դիտողությունները ցույց են տվել, որ նրանք մեծ երամաներով հաճախակի լինում են բրնձի դաշտերում և սնվում բրինձով: Աշնանը տնային ճնճղուկների համար որպես հիմնական կեր հանդիսանում է խաղողը:

Ճնճղուկների քուջերից ու ստամոքսներից ստացված նյութերը չեն կարող տալ խաղողին հասցված վնասի լրիվ պատկերը, որովհետև այն հիմնականում հեղուկ է և մարսվում է շատ կարճ ժամանակամիջոցում: Եթե քուջում կամ բերանում հայտնաբերվել են խաղողի մնացորդներ, կնշանակի թռչունը խրված է ուտելուց անմիջապես հետո: Խաղողին հասցված վնասի մասին շատ թե քիչ տեղեկություններ են ստացված տեսողական դիտողությունների միջոցով:

Տնային ճնճղուկներն բնորոշակ են հսկայական երամաներով հարձակվել խաղողի այգիների վրա: Ինչպես ցանքատարածություններում, այնպես էլ այգիներում, ավելի շատ են տուժում այգու եզրային վազերը: Մեծ այգիների խորքում գտնվող վազերը ավելի քիչ են տուժում: Որոշելու համար, թե որքան է տնային ճնճղուկների կողմից խաղողին հասցվող վնասի չափը, 1948—1962 թթ. Արարատյան հարթավայրի մի քանի տեղերում կատարել ենք հաշվառում: Պարզվել է, որ բնակավայրերից մինչև 1 կմ հեռավորության վրա գտնվող խաղողի այգիներում տնային ճնճղուկները ոչնչացնում են խաղողի բերքի 50—60%-ը, իսկ այգիների եզրային մասերում՝ ամբողջությամբ: Այս երևույթը ավելի ակնառու է դարձել վերջին տարիների ընթացքում:

Բնակավայրերից 2—4 կմ հեռավորության վրա տնային ճնճղուկները խաղողին վնասում են 10—28%-ով: Դիտողությունները ցույց են տվել, որ համեմատաբար շատ են տուժում վաղահաս ու լարային սիստեմով մշակվող խաղողները:

1962 թ. օգոստոսին և սեպտեմբերին Նրևանի սլեսական համալսարանի ուսումնա-օժանդակ տնտեսությունում կատարված հաշվառումներից պարզվեց, որ լարային սիստեմով մշակելու դեպքում խաղողը 1,5 անգամ ավելի է տուժում քան թմբային ձևով մշակելու դեպքում, իսկ թաումաները տուժում են 80—90%-ով:

Աշնանը ճնճղուկները սնվում են զգալի քանակությամբ վայրի բույսերի սերմերով, դրանցից, հիմնականում, հավակորեկով, որը մշակված դաշտերում շատ քիչ է լինում:

Աշնան ամիսներին 1306 ճնճղուկների քուջերից ու ստամոքսներից միայն 7-ի ստամոքսում է եղել միջատների մնացորդներ *Coleoptera* կարգից:

* Հաշվառում կատարվել է Հոկտեմբերյանի շրջանի 3-րդ սովխոզում, Արշալույսում, Կաթունարիում, Թաիրովի սովխոզում, Թաղա-դյուզում, Բաղամյանում, Կիրովի անվան սովխոզում և Նորքի այգիներում:

Աղյուսակ 4

Տնային ճնճղուկների կերած բույսերը Արարատյան հարթավայրում (սեպտեմբեր-հոկտեմբեր (ըստ 1306 քուջերի և ստամոքսների)

Բույսերի մասերի անունը	Հանդիպման հաճախականությունը ըստ տեղանքի					
	միջին	ստանդարտ	վիտամին	աղի	քիմիական	ստանդարտ
Հավակորեկ (սերմ)—Echinochloa	185	182	64	122	563	18,25
Յորեն (հատիկ)—Triticum	298	35	14	142	489	15,85
Հացազգիներ—Gramineae	72	165	46	104	387	12,54
Առվույտի սերմ—Medicago sativa L.	152	114	18	95	379	12,29
Խաղող—Vitis vinifera L.	105	174	—	—	279	9,04
Մատիտեղ—Polygonum	—	34	12	195	241	7,81
Հավակատար—Amaranthus	—	28	19	174	221	7,17
Խողանուկ—Setaria	22	62	15	107	206	6,68
Երեքնուկ—Trifolium	25	71	12	96	204	6,61
Պամիդոր—Lycopersicum esculantum	27	11	—	25	63	2,04
Սիդախոտ—Phleum	6	32	4	11	53	1,72

Ձմռան ամիսներին տնային ճնճղուկները մեծ երամանորով կուտակվում են բնակավայրերում և ընդունում ամեն տեսակի մատչելի անունը, ըստ որում տարբեր տեղերում սնվելու տեսակետից հարմարվում են տվյալ միջավայրին:

Արարատյան հարթավայրի կոլտնտեսությունների ու սովխոզների անասնապահական ֆերմաների մոտ ճնճղուկները հիմնականում սնվում են այն խոտերի սերմերով, որոնք կան տվյալ ֆերմայում, առավելագույնը երեկո քուջուչ անելով դեզերի մոտ: Նրանք շատ են սիրում քուջուչ անել ձիու աղբի մեջ և այնտեղից հանել հատիկների մնացորդներ:

Թռչնաբուծական ֆերմաներում ու ֆաբրիկաներում (Երևան, Էջմիածին) հավերին կերակրելու ժամանակ դիտված է, որ ամեն անգամ կերի վրա հաղարավոր ճնճղուկներ են հարձակվում: Մոտավորապես հաշվել ենք յուրաքանչյուր ֆաբրիկայի բակերում 25—30 հաղար տնային ճնճղուկներ: Խիստ նվազեցրած տվյալներով, եթե յուրաքանչյուր ճնճղուկ օրական 10 գրամ կեր ընդունի, ապա դա նշանակում է օրական ֆաբրիկայից տանել 250—300 կգ կեր, չհաշված այն չարիքը, որ նրանք մեկ տեղից մյուսն են տեղափոխում գյուղատնտեսական կենդանիների և մարդկանց ներքին ու արտաքին պարազիտներ [2, 5, 8]:

Տնային ճնճղուկների օգտակար գործունեությունը համեմատաբար ավելանում է ձմռան սկզբին և վերջին, երբ բնակավայրերի շրջակայքի չմշակված կամ ոչ լավ մշակված դաշտերում նրանք որոշ մոլախոտերի սերմեր են ուտում:

Աղյուսակ 5-ում բերված են տվյալներ տնային ճնճղուկների ձմեռային կերակրման վերաբերյալ:

Բացի աղյուսակ 5-ում նշված կերերից, ինչպես հայտնի է, տնային ճնճղուկները ձմռանը սնվում են մարդկանց սեղանի ավելցուկներով, որոնք երբեմն

Աղյուսակ 5

Տնային ճնճղուկների կերած բույսերը Արարատյան հարթավայրում ձմռանը (դեկտեմբեր-հունվար-փետրվար) (ըստ 1310 քուջերի և ստամոքսների)

Բույսերի մասերի անունը	Հանդիպման հաճախականությունը ըստ տեղանքի						
	ընդհանուր	պտղատու	կիտա	աշու	ընդամենը	ընդհանուր քանակի հիշատակում	ձանթու-թյուն
Ցորեն—Triticum	492	18	6	133	649	20,68	
Հավակորեկ—Echinochloa	212	381	41	75	509	16,22	
Առվույտի սերմ—Medicago sativa L.	398	10	12	28	448	14,28	
Հացազգի սերմեր—Gramineae	364	58	—	12	434	13,83	հիմնականում դեկտեմբերի սկիզբին և փետրվարի վերջին
Հավակատար—Amaranthus	184	11	—	24	219	6,98	
Մատիտեղ—Poligonum	187	21	—	64	272	8,67	
Թելուկի սերմ—Chenopodium	195	9	4	—	208	6,62	
Եգիպտացորեն—Zea mays L.	142	—	—	—	142	4,52	
Խոզանուկ—Setaria	131	8	2	—	141	4,50	
Գարի—Hordeum vulgare L.	116	—	—	—	116	3,70	

անփութորեն թափվում են չծածկվող աղբանոցներում կամ բակերում և դրանով իսկ նպաստում նրանց բարեհաջող ձմեռելուն:

Ելնելով տարիների ընթացքում կատարված ուսումնասիրությունների արդյունքներից, կարող ենք ասել, որ Արարատյան հարթավայրում կովկասյան տնային ճնճղուկներն ընդհանուր առմամբ խիստ վնասակար թռչուններ են, որոնց պետք է ոչնչացնել, կամ, առնվազն, խիստ սահմանափակել նրանց քանակական աճը: Այդ նպատակով առաջարկում ենք պարտադիր կերպով ծեփե գյուղերում և այգիներում այն շենքերի պատերի ճեղքերը, որոնք հարմար տեղեր են ճնճղուկների բնադրման համար:

1962 թվականին, պայքարի բիմիական միջոցներ մշակելու նպատակով, Երևանի պետական համալսարանին պատկանող՝ Նորքի այգիներում կատարել ենք մի շարք լաբորատոր փորձեր, օգտագործելով Ba-ի, Na-ի ֆտորացնետատները և ֆտորացնետամիդը:

Լաբորատոր փորձերի արդյունքներն ստուգվել են նաև արտադրության մեջ՝ Համալսարանի ուսումնա-օժանդակ տնտեսությունում (Նորագյուղ), Շահումյանի շրջանի Թաղազյուղում և այլ տեղերում: Արդյունքները միանգամայն դոհացուցիչ են:

Կովկասյան տնային ճնճղուկների ոչնչացման հետ կապված մեր կատարած լաբորատոր փորձերը, ինչպես և արտադրության մեջ կիրառված նյութերի նախնական տվյալները կտրվեն առանձին:

Երևանի պետական

համալսարանի կենսաբանական

ֆակուլտետ

Ստացվել է 20.XI 1962 թ.

Г. Г. МАНУЧАРЯН

ХОЗЯЙСТВЕННОЕ ЗНАЧЕНИЕ КАВКАЗСКОГО
ДОМОВОГО ВОРОБЬЯ

Р е з ю м е

Проведенные нами наблюдения показали, что домовые воробьи во все времена года являются вредителями сельского хозяйства. Весной они питаются как остатками семян, так и почками и цветами различных деревьев, что составляет более 94% от их общего корма. Птенцы вскармливаются и насекомыми (15,31% от общего корма).

Процент вердоносности домовых воробьев к осени увеличивается, их количество удваивается и даже утраивается за счет размножения. Выяснилось, что растительный корм, принимаемый птенцами, составляет 84,69% общей пищи, из коих 29,43% зерна пшеницы, а остальной процент составляют зерна и семена других растений и плоды.

Количество зернового корма летающих домовых воробьев возрастает в летние месяцы, причем 36,96% от всего корма составляет пшеница. В Араратской равнине воробьи снижают урожай пшеницы на 20—35%.

На расстоянии 1 км от населенных пунктов домовые воробьи снижают урожай винограда на 50—60%; особенно страдают скороспелые сорта. С отдалением от населенных пунктов вглубь сада отмечается заметное понижение наносимого вреда.

Больше всего страдают виноградники, образующие беседки (80—90%), несколько меньше страдает урожай при шпалерной системе, сравнительно меньше страдает культура в расстил.

Зимой в кормовой состав домовых воробьев входят также большое количество семян сорняков. На первый взгляд это может показаться полезным явлением. Однако следует учесть то, что зимой вся Араратская равнина бывает покрыта снегом и воробьи питаются фактически кормом, предназначенным скоту. В этом аспекте вопрос о «полезности» домовых воробьев теряет свой смысл, а если говорить об их пользе, то с оговоркой.

Долголетние наблюдения позволяют нам сделать вывод, что кавказские домовые воробьи в Араратской равнине являются вредителями и должны подвергаться истреблению или резкому сокращению их численности.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Зильфян В. Н., Аветисян Т. А., Овасапян О. В. Тр. Арм. противочумной станции, вып. 1, 1960.
2. Ильенко А. И. Зоол. журнал, т. XXXVIII, вып. 7, 1939.
3. Кашкаров Д. Н., Фосс А. Т., Русинова К. И., Сатаева З. Л., Заруба Е. А. Бюллетень Средне-Азиатского госунта, 13, 1926.
4. Манучарян Г. Г. Тр. Ереванского госунта (серия биол. наук), т. 38, вып. 3, 1953.

5. Мозговой А. А. Изв. Ак. сельхоз. наук им. В. И. Ленина. М., 1937.
6. Нестеров П. В. Орнитологический вестник, I ч., 1911.
7. Оганджян А. М. Изв. АН АрмССР (биол. науки), т. XIV, 6, 1961.
8. Семашко Л. Л. Полевой и домовый воробьи в Туркмении—как прокормители и переносчики эктопаразитов (преимущественно клещей), АН Турк.ССР, Ашхабад, 1961.
9. Холодковский Н. А., Силантьев А. А. Птицы Европы. Петербург, 1901.